«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա՝ ՆԶՊ և ԱԿ

Մասնակից - փոխգնդապետ Ս. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ղեկավար - փոխգնդապետ Ա. Իսահակյան

Թեմա՝ Շարային պատրաստության դասավանդման մեթոդիկան և դժվարությունները աշակերտների շրջանակում

2023թ

Բովանդակություն

Ներածություն..... 3
1. Աշակերտների շարային պատրաստության ուսուցման մեթոդները 5
2. Աշակերտների շարային պատրաստության թեմաների դասավանդման մեթոդական մշակումներ 11
3. Եզրակացություն..... 14
Օգտագործված գրականության ցանկ 15

Ներածություն

Թեմայի արդիականությունը: Մարտական պատրաստության մեջ լինելով բաղկացուցիչ մաս՝ շարային պատրաստությունը՝ ազդում է զորքերի ընդանուր գործունեության բոլոր կողմերի վրա, կոփում և կատարելագործում է մարմնին տիրապետելու ունակությունը, կամքը. զարգացնում է՝ կոլեկտիվիզմի զգացողությունը, դիտողականությունը, համառությունը և ուշադրությունը, որոնք էլ ընդանուր առմամբ նպաստում են զինծառայողների (աշակերտների) զինվորական կարգապահության ամրապանդմանը:

Արդի աշխարաքաղաքական ձևափոխումների և փոփոխությունների նոր ժամանակաշրջան է, որի պատճառով զգալիորեն աճել է բարդ տեխնոլոգիական և կոլեկտիվ զենքի դերը մարտում, այդ պատճառով շարային պատրաստության մակարդակը պետք է լինի ավելի բարձր մակարդակի վրա, որպեսի կարողանան վարժաձևերը հստակ, համաձայնեցված և միաժամանակյա կատարեն, որը և պետք է սերմանվի ու ոգեշնչի աշակերտներին սեփական գործողությունների վստահությունը և կատարողական կարգապահությունը ամրապնդվելու ուղղությամբ:

Առանց շարային պատրաստության ճիշտ ուսուցման հնարավոր չէ ժամանակակից մարտում հասնել հստակ գործողությունների:

Շարքը եղել և մնում է ստորաբաժանումների անձնակազմի համատեղ գործողություններին նախապատրաստվելու հիմքը, որը ուսուցման ոչ մի այլ ձև պետի կարգադրությունն ու հրամանը այնքան արագ, հստակ ու միասնաբար կատարելու հնարավորություն չի ընձեռում, որքան շարքը: Շարային պատրաստությունը հիմնվում է կոլեկտիվ վարժաձևերի կատարման ժամանակ աշակերտների հստակ գործողությունների անհրաժեշտության խոր ընկալման վրա:

Շարային վարժությունն ամրապնդում է կարգապահությունը, օգնում տիրապետելու տարբեր վարժաձևերի ու գործողությունների, ինչպես նաև ձեռք բերելու այնպիսի հմտություններ, որոնք անհրաժեշտ են մարտավարական, կրակային, մասնագիտական պատրաստության և այլ առարկաների պարապմունքների համար:

Շարային պատրաստությունն ընդգրկում է՝ անհատական շարային ուսուցումը՝ առանց զենքի և զենքով:

Նպատակը և խնդիրները: Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել շարային պատրաստության դասավանդման մեթոդները դպրոցում և բացահայտել

դժվարությունները, որոնց բախվում են աշակերտները:

Ելնելով նպատակից առաջադրել ենք հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել աշակերտի անհատական շարային պատրաստության առանձին տարրերի դասավանդման մեթոդները
2. Ներկայացնել շարային պատրաստության ուսուցման առանձին էլեմենտները
3. Կազմել առանձին թեմաների ուսուցման դասի պլաններ:

1. Շարային պատրաստության ուսուցման մեթոդները

Շարային պատրաստության ուսուցումն իրականացվում է պլանային պարապմունքների և կատարելագործվում մյուս բոլոր պարապմունքների ընթացքում, ինչպես նաև՝ առօրյա կյանքում:

Փորձը վկայում է, որ աշակերտների շարային վարժվածության բարձր մակարդակին կարելի է հասնել՝

-նպատակասլաց ու ճիշտ պլանավորմամբ, բոլոր պարապմունքների հստակ կազմակերպմամբ և մեթոդական ճիշտ անցկացմամբ,

-յուրաքանչյուր վարժաձևի ու գործողության խոր ուսումնասիրմամբ և հետևողական կատարելագործմամբ՝ խստորեն պահպանելով ,Շարային կանոնադրության պահանջները,

-կանոնավորապես կատարվող հրահանգավորումներով, շարային պատրաստությունից հրահանգչա-մեթոդական, ցուցադրական ու պլանային պարապմունքների պարբերական անցկացմամբ՝ առանց երկարատև ընդմիջումների,

-բոլոր պարապմունքների ժամանակ ուսուցման հմտությունների կատարելագործմամբ[1]:

Շարային ուսուցման գործում բարձր ցուցանիշների հասնելու համար մեծ նշանակություն ունեն զինղեկերի անհատական շարային վարժվածությունը, վարժաձևերն ու գործողություններն օրինակելիորեն ցուցադրելու ունակությունը:

Շարային պատրաստությունը զուտ գործնական աշխատանք է: Այստեղ յուրաքանչյուր վարժաձև պետք է մշակել բազմաթիվ մարզումներով՝ դրանք հետագայում ևս շարունակելով, այլապես կթուլանա վարժաձևերը հստակ ու գեղեցիկ կատարելու ունակությունը:

Շարային պատրաստության պարապմունքները, որպես կանոն, պետք է անցկացնել դասարանի կազմով զինղեկի ղեկավարությամբ:

Միայն անհատական շարային պատրաստության պարապմունքների ընթացքում կարելի է նկատել աշակերտի բոլոր սխալները և ժամանակին վերացնել դրանք:

---

[1] ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ «Շարային պատրաստություն» առարկայից մեթոդական մշակում, Երևան 2011, էջ 4

Լինելով մարտական պատրաստության ինքնուրույն առարկա՝ շարային պատրաստությունն օրգանապես կապված է մյուս առարկաների հետ և զգալիորեն նպաստում է ժամանակակից մարտում անձնակազմի կողմից անհրաժեշտ գիտելիքների, ունակությունների, հմտությունների ձեռքբերմանը և դրա կայուն հոգեբանության զարգացմանը[2]:

Յուրաքանչյուր զինղեկ պետք է մշտապես հիշի, որ գիտելիքների հիմքն ավելի լավ է դրվում ուսուցման առաջին իսկ օրից: Հենց այդ ժամանակ են մշակվում, այնուհետև սովորություն դառնում շարային վարժաձևերի կատարման որոշակի կարգուկանոնը, զենքով ու մարտական տեխնիկայով կատարվող գործողությունները:

Հայտնի է, որ մարդկային ճանաչողության սահմանները հարաբերական են, ուստի պետք է հասնել այն բանին, որ ենթակաները չքաշվեն, չամաչեն այսօրվա չիմացությունից (չկարողանալուց): Չէ որ պարսավանքի է արժանի ոչ թե նա, ով չգիտի, այլ նա, ով ցույց է տալիս, թե իբր գիտի:

Յուրացնել՝ նշանակում է հասկանալ, հիշել, իսկ նյութին տիրապետել՝ յուրացնել գիտելիքները, կիրառել գործնականում:

Ուսուցման ընթացքում շատ կարևոր է հայտնին շաղկապել անհայտին, տեսությունը՝ գործնականին, սահմանել ուսուցման առավել արդյունավետ ձևեր ու մեթոդներ:

Շատ կարևոր է նաև, որ յուրաքանչյուր պարապմունք անցկացվի մրցակցային ցուցանիշների համեմատությամբ: Դա անհրաժեշտ նախադրյալներ է ստեղծում ուսումնասիրվող նյութն ավելի արագ յուրացնելու համար:

Յուրաքանչյուր շարային պարապմունք աշակերտների շարային վարժվածությունը կատարելագործելու մի նոր աստիճան է: Այդ ընթացքում ստացած գիտելիքների խորությունն ու հմտությունների կայունությունը մեծապես պայմանավորված են պարապմունքներում կիրառվող ուսուցման ու մարզումների մեթոդների ճիշտ ընտրությամբ:

---

[2] ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, ,Շարային պատրաստությունե առարկայից մեթոդական մշակում, Երևան 2011, էջ 12

Շարային պատրաստության պարապմունքները պլանավորելիս զինղեկը պետք է ղեկավարվի մարտական պատրաստության ծրագրի պահանջներով, շարային պատրաստությունից առաջադրված խնդիրներով, ,Շարային կանոնադրության դրույթներով, ինչպես նաև դասարանի շարային վարժվածության մակարդակով:

Այսպիսով, յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ պարապմունքների և ուսումնական հարցերի թիվը կարող է տարբեր լինել: Շարային բարդ վարժաձևերի (առանց զենքի և զենքով շարային քայլ, դարձումներ տեղում, շարժման ընթացքում և այլն) առավել լավ ուսումնասիրման ու կատարման համար պարապմունքները պետք է բազմիցս կրկնվեն: Չի կարելի անցնել հերթական ուսումնական հարցի ուսումնասիրմանը, քանի դեռ չեն ապահովվել ուսումնասիրվող հարցի լիարժեք մշակումն ու կատարումը: Եթե տվյալ պարապմունքի ուսումնական հարցերից մեկն ինչ-որ պատճառով բաց է թողնվել կամ չի յուրացվել, ապա այն պետք է տեղափոխվի հերթական դասին:

Շարային պատրաստության պարապմունքները պետք է անցկացվեն կանոնավորապես, ժամանակի հավասար ընդմիջումներով, որպեսզի աշակերտները չմոռանան (չկորցնեն) նախորդ պարապմունքի ժամանակ ձեռք բերած հմտությունները[3]:

Չպետք է թույլատրել, որ շարային պարապմունքներն անցկացվեն երկու պարապմունք մեկ օրում, քանի որ դրանց ճիշտ կազմակերպման համար անհրաժեշտ է ֆիզիկական մեծ լարում:

Շարային պատրաստության, ինչպես նաև մյուս առարկաների պարապմունքները ծառայում են նպատակին, երբ նախապատրաստվում են հանգամանալից և ունեն նյութական ապահովում:

Յուրաքանչյուր պարապմունք պետք է բաղկացած լինի երեք մասից՝

-ներածական մաս, որն ընդգրկում է աշակերտների արտաքինի ստուգումը,դեպի շարային հրապարակ կամ պարապմունքի վայր դուրս գալը, պարապմունքի թեմայի, նպատակի և ուսումնական հարցերի հայտարարումը,

[3] ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, ,Շարային պատրաստությունե առարկայից մեթոդական մշակում, Երևան 2011, էջ 12

-հիմնական մաս, որն ընդգրկում է նոր վարժաձևերի ուսումնասիրումն ու կատարումը մասերի բաժանելով և ամբողջությամբ: Դրանք կատարվում են զինղեկի հրամանով, ինչպես նաև ինքնուրույնաբար, զույգերով և դասարանի կազմով,

-եզրափակիչ մաս, որի ընթացքում խորհուրդ է տրվում անցկացնել վերլուծություն, հրապարակել սովորողների գնահատականները, նշել լավագույններին և ինքնապատրաստության առաջադրանք տալ:

Շարային ուսուցման հիմքում պետք է դրվեն ռազմագիտական մանկավարժության ուղեցույց սկզբունքները՝ սովորողների գիտակցականությունն ու ակտիվությունը, հետևողականությունը, մատչելիությունն ու համակարգվածությունը: Շարային վարժաձևերի մշակումն ու կատարումը բոլոր դեպքերում իրականացվում են վարժությունների միջոցով: Տվյալ դեպքում հարմար չէ ոչ պատմելու, ոչ զրույցի, ոչ էլ որևէ այլ մեթոդ: Բայց, սովորողների կազմով պայմանավորված, ըստ ուսումնասիրվող հարցերի տիրապետման մակարդակի, կարելի է ուսուցման տվյալ մեթոդի մեջ առանձին վարժաձևեր փոխել:

Ինչպես հայտնի է, ցանկացած առարկայի պարապմունքի ժամանակ դրվում է ուսումնական գործընթացի երեք հիմնական օղակներին համապատասխան երեք գլխավոր նպատակ՝

-գիտելիքների հաղորդում, ընկալում և իմաստավորում,

-ունակությունների և հմտությունների մշակում,

-գիտելիքների, ունակությունների և հմտությունների ամրապնդում ու կատարելագործում[4]:

Առաջին նպատակին հասնում են գերազանցապես բանավոր շարադրման, ցուցադրման ու զրույցի մեթոդով, երկրորդին՝ վարժություններով ու բացատրությամբ, երրորդին՝ կանոնադրությունների, ուսումնական ձեռնարկների և այլ նյութերի ինքնուրույն ընթերցանությամբ, ինքնուրույն մարզումներով:

Առաջադրված խնդիրների կատարումն ապահովվում է՝ մեթոդական

[4] ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, ,Շարային պատրաստությունե առարկայից մեթոդական մշակում, Երևան 2011, էջ 12

պահանջները, թեմաները և ուսումնական հարցերը մշակելիս, հաջորդականության պահպանումը՝ պարզից դեպի բարդը, հայտնիից՝ անհայտը գնալը: Ուսումնական գործընթացի էությունը պարապմունքի ղեկավարի և սովորողների գործունեությունն է որոշակի գիտելիքների, ունակությունների և հմտությունների ձեռքբերման նպատակով: Այս գործընթացում վճռորոշ է պարապմունքի ղեկավարի դերը:

Գիտելիքների յուրացման գործընթացը ճանաչողական գործունեությունն է: Գիտելիքների հիման վրա մասնագիտական վարժությունների կատարման ընթացքում զարգանում են անհրաժեշտ ունակություններ ու հմտություններ:

Ունակությունը գիտելիքների կիրառումն է գործնականում, այսինքն՝ այս կամ այն գործողության կատարումը համապատասխան գիտելիքների կիրառմամբ:

Հմտությունը մեխանիկորեն կատարվող գործողություն է՝ հասցված այնպիսի կատարելության, երբ դա կատարվում է ճիշտ, արագ, առանց ավելորդ ջանադրության և չի պահանջում հիշել դրա գիտական հիմնավորումը: Հմտությունը մշակվում է մարզումների ընթացքում գործողությունների բազմաթիվ կրկնությամբ:

Նպատակահարմար է պարապմունքներն անցկացնել հետևյալ հաջորդա-կանությամբ՝

-նախորդ պարապմունքների ժամանակ սովորած վարժաձևերի ու գործողությունների մարզում և ստուգում,

-ծանոթացում նոր շարային վարժաձևին կամ գործողություններին,

-վարժաձևերի կամ գործողության ուսուցում. եթե դրանք բարդ են, ապա պետք է սովորել ըստ տարրերի (մասերի բաժանելով),

-ուսուցման միակողմ ու երկկողմ (անհատական կամ զույգերով) եղանակի կիրառում,

-սովորողների մարզում մինչև վարժաձևերի կամ գործողությունների օրինակելի կատարում,

-վարժաձևի կամ գործողության լավագույն կատարման մրցության կազմակերպում,

-վերլուծություն:

Շարային պատրաստության համար շատ կարևոր է զինղեկի հստակ ու բարձրաձայն հրամաններ տալու կարողությունը: Ոչ ճիշտ և ոչ հստակ տրված

հրամանը դժվարացնում է դրա կատարումը:

Նախնական հրամանը պետք է տրվի հստակ, ձգելով, որպեսզի սովորողները հասկանան, թե զինղեկը ինչ գործողություններ է պահանջում իրենցից:

Կատարողական հրամանը պետք է տրվի մի փոքր դադարից հետո՝ բարձրաձայն, հստակ, անհրաժեշտ վանկատմամբ և եռանդուն: Երբեք չի կարելի կատարողական հրամանը ձգել, դրանից սովորողներն իզուր լարվում են և վարժաձևը հստակ չեն կատարում:

Հրաման կամ կարգադրություն տալուց առաջ զինղեկը պարտավոր է ընդունել շարային կեցվածք, որը դաստիարակում է աշակերտների կարգապահություն և հարգանք շարքի նկատմամբ:

Շարային վարժաձևերի ուսուցումը պետք է կատարել հետևյալ հաջորդականությամբ՝

-ծանոթացում վարժաձևին,

-վարժաձևի ուսուցում:

Զինղեկը վարժաձևի ծանոթացման համար պետք է հայտնի վարժաձևի անվանումը և նշի, թե որտեղ, ինչ նպատակով է այն կիրառվում,

-արձակի վարժաձևի կատարման հրամանը,

-շարային կանոնադրությանը խիստ համապատասխան ցուցադրի, թե ամբողջությամբ, այնուհետև մասերի բաժանելով ինչպես է կատարվում վարժաձևը, և համառոտ բացատրություններով սովորողներին պարզաբանի կատարման կարգը: Վարժաձևի ծանոթացմանը պետք է հատկացվի նվազագույն ժամանակ[5]:

Շարային վարժաձևի բարդությամբ պայմանավորված՝ դրա ուսուցումը կարելի է կատարել՝

-ամբողջությամբ, եթե այն բարդ չէ,

-մասերի բաժանելով, եթե բարդ է,

-նախապատրաստական վարժություններով, եթե այն բարդ է, և դժվար է յուրացնել դրա տարրերը (մասերը):

---

[5] ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, ,Շարային պատրաստությունե առարկայից մեթոդական մշակում, Երևան 2011, էջ 21

Վարժաձևի ծանոթացման համար պարապմունքի ղեկավարն օրինակելիորեն ցուցադրում է դրա կատարման կարգը, նախ՝ ամբողջությամբ, ապա՝ ըստ տարրերի (մաս առ մաս)՝ զուգահեռաբար բացատրելով գործողությունները:

Վարժաձևի կամ գործողության յուրաքանչյուր տարրի ուսումնասիրումը (ուսուցումը), եթե կատարումը բարդ է, նույնպես սկսվում է ցուցադրությամբ և համառոտ բացատրությամբ:

Հստակ, ճիշտ ու գեղեցիկ ցուցադրված վարժաձևերը և գործողությունները միշտ էլ սովորողների վրա մեծ տպավորություն են թողնում և ցանկություն առաջացնում դրանք կատարել այնպես, ինչպես ցուցադրվել են:

Անհրաժեշտ է ցուցադրումը միշտ զուգակցել համառոտ բացատրությամբ: Բացատրությունը հնարավորություն է ընձեռում բացահայտել շարային վարժաձևի կամ գործողության այն կողմերը, որոնք ցուցադրման դեպքում դժվար են յուրացվում:

Շարային վարժաձևի կամ գործողության ծանոթացումից հետո հմտության ձևավորման գործընթացն ընդգրկում է միմյանց հետ կապված երեք հիմնական փուլ:

Առաջին փուլ. վարժաձևի կամ գործողության մասերի բաժանումը (եթե բարդ է) և դրանց կատարումն ըստ տարրերի (մասերի):

Երկրորդ փուլ. մասերի (տարրերի) հաջորդական միավորումը խմբերի, ապա՝ ամբողջի մեջ:

Երրորդ փուլ. վարժաձևի կամ գործողության բազմակի կրկնությունը՝ դրանք հասցնելով մեքենայական կատարման աստիճանի: Պետք է հասնել դրանց ճիշտ, արագ և գեղեցիկ կատարման:

Մարզումները կատարվում են նախ դանդաղ, այնուհետև՝ սովորական ընթացքով, զույգերով կամ անհատական կարգով, զինղեկի հրամանով՝ սովորողների հաշվելով կամ թմբուկի նվագակցությամբ: Աշակերտների սխալները պետք է ուղղվեն մարզումներին զուգընթաց:

2. Շարային պատրաստության թեմաների դասավանդման մեթոդական մշակումներ

Շարային կեցվածք:

8-րդ դասարան:

Զինղեկը բացատրում է, որ շարային կեցվածքի ընդունումը զինծառայության այբուբեն է, որը զինվորին ուղեկցում է զինծառայության ընթացքում և կյանքում: Դաստիարակում է կարգապահություն, ուշադրություն կոլեկտիվիզմ: Նախօրոք զինղեկը խմբակի աշխատանքի ժամանակ դասակների և ջոկերի հրամանատարների հետ անցկացնում է պարապմունք շարային վարժանքների կատարման և հրաման տալու հարցերով և պատրաստում նրանց տվյալ դասի անցկացմանը:

Զինղեկը դասակի շարքի առաջ ցուցադրում է շարային վարժաձևերը, այնուհետև՝տարրերով: Հետո ջոկերի հրամանատարները վարժաձևերը կատարում են իրենց ջոկերի հետ: Կարևորում են հրաման տալու կարգը, որը կարող է լինել նախնական և կատարողական, կամ միայն կատարողական:

Բացատրում են ցանկացած վարժաձևի կատարման ժամանակ մարմնի մասերի՝ ոտքերի, ձեռքերի, ուսերի, գլխի, կրծքավանդակի դիրքը, շարժումների կարգը և հերթականությունը: Միաժամանակ բացատրելուն զուգընթաց ցուցադրում են վարժաձևերը, հրաման տալու կարգը և հրամանի կատարումը:



Օրինակ. շարային կեցվածք պարապմունքի ժամանակ բացատրում ենք որ շարային կեցվածք ընդունում են “Զգաստ” կամ “Շարվիր” հրամաններով: Լսելով հրամանը զինծառայողը առանց լարվելու կանգնում է ուղիղ, գլուխը բարձր պահած, կուրծքը և մարմինը մի փոքր առաջ տված- մարմնի ծանրության ուժն ուղղելով թաթերին: Ձեռքերը պետք է ցած իջեցնել ազդրերի կողքով այնպես,որ ձեռքերի ափերը կիսախուփ ծալված մատներով հպվեն ազդրերին:

Շարային կեցվածք ընդունվում է նաև առանց հրամանի՝ դասագրքում նշված է որ դեպքերում:

Մարզվելու ժամանակ ցանկալի է օգտվել հայելուց, սխալները տեսնելու և ուղղելու համար:

Օրինակ. Դարձումներ տեղում թեմայի ուսումնասիրման ժամանակ բացատրվում և ցուցադրվում են դարձումների տեսակները և կատարման կարգը: Ուշադրություն է դարձվում մարմնի ծանրության տեղափոխման, ձեռքերի, ոտքերի,գլխի դիրքի վրա: Դարձումները կատարվում են երկու գործողությամբ, որոնք նկարագրված են դասագրքերում և մեթոդական ձեռնարկներում: Դարձումների ժամանակ պահպանվում են շարային կեցվածքի բոլոր կանոները: Մարզումների միջոցով հասնում ենք կատարելության:Շարային պարապմունքները անցկացվում են հետևյալ սկզբունքով՝ սկզբում անհատական կարգով , ապա ջոկի և դասակի կազմով:

Շարային պարապմունքների առանձնահատկություններից են մշտական մարզումները, որոնք պետք է անցկացվեն դասի սկզբում և ընթացքում:

<u>Ցուցադրիր ճիշտ վարժանքը</u>

Աջ-դարձ դարձումը կատարելու ժամանակ անրաժեշտ է

- հենվել ձախ կրունկին և ձախ թաթին, թեքվել 90 աստիճան աջ
- հեվել աջ կրունկին ձախ թաթին, թեքվել 90 աստիճան աջ
- հենվել ձախ կրունկին և աջ թաթին, թեքվել 90 աստիճան աջ
- հենվել երկու թաթերի վրա և , թեքվել 90 աստիճան աջ

Հետ-դարձ դարձումը կատարելիս անրաժեշտ է

- կատարել դարձում 180 աստիճան աջ ուսի ուղղությամբ
- կատարել դարձում 180 աստիճան ձախ ուսի ուղղությամբ
- հենվել ձախ կրունկի և ձախ թաթին, կատարել 180 աստիճան ձախ ուսի ուղղությամբ

○ հենվել աջ կրունկի և աջ թաթին, կատարել 180 աստիճան աջ ուսի ուղղությամբ:



ա բ գ

Ոտքերի դիրքը դարձման ժամանակ (աջ, ձախ)

Շարային վարժաձևերն առանց զենքի 10րդ դասարան

Դասը սկսվում է զինղեկի հետևյալ հարցադրմամբ՝ ի՞նչ է շարային պատրաստությունը, դրա հիմնական նպատակներն ու խնդիրները: Այնուհետև պաստառին գրանցում է այն ամենը, ինչ ասվում է աշակերտների կողմից՝ առանց վերլուծության և մեկնաբանման (3 րոպե) Զինղեկը ուղղորդիչ հարցերով աշակերտներին ներգրավում է դասապրոցեսի մեջ:

Գործողության ավարտից հետո դասը կարելի է շարունակել հետևյալ կերպ.

- հանձնարարել զույգերով աշխատանք՝ խմբավորել հիմնական խնդիրները,
- պաստառի օգնությամբ ստուգել արդյունքները։

Հիմնական մաս։ Զինղեկը մտքերի քարտեզագրման մեթոդով աշակերտների օգնությամբ ներկայացնում է դասը՝ ,Շարային վարժաձևերն առանց զենքի:

Ամփոփում

Զինղեկը պաստառին գրում է դասին վերաբերող, 2 բանալի բառեր և հանձնարարում պրիզմայի մեթոդով կատարել անհատական աշխատանք (5 րոպե): Մի քանի աշակերտների միջոցով ներկայացվում են անհատական աշխատանքներ (10 րոպե):

Եզրակացություն

Այսպիսով կարող ենք եզրակացնել, որ շարային պատրաստության պարապմունքները անց են կացվում շարային կանոնադրության համաձայն: Շարային կանոնադրությունը հանդիսանում է զինծառայողների կարգապահության ամրապնդմանն ուղղված նորմատիվ-իրավական փաստաթուղթ:

Շարային կանոնադրությունը սահմանում է՝

շարքի տեսակները, նրա բաղկացուցիչ մասերը,

1. շարային վարժաձևերն ու շարժումները զենքով և առանց զենքի,
2. զինծառողների պարտականությունները շարվելուց առաջ և հետո:
3. զինվորական ողջույնի նշանակությունն ու կատարման կարգը,
4. զորամասերի ու ստորաբաժանումների շարքերը հետիոտն կարգով ու մեքենաներով,
5. պետին (հրամանատարին) մոտենալը և նրանից հեռանալը,
6. շարային ստուգատեսի անցկացման կարգը:

Շարային պատրաստության առարկայի շրջանակներում աշակերտները սովորում են ինչպես ճիշտ ու ներդաշնակ գործել ոչ միայն շարքում, այլև մարտական գործողությունների ժամանակ: Առանց շարային պատրաստության ճիշտ ուսուցման հնարավոր չէ ժամանակակից մարտում հասնել հստակ գործողությունների:

Շարային վարժվածությունը ամրապնդում է աշակերտների կարգապահությունը, օգնում տիրապետելու տարբեր վարժաձևերի ու գործողությունների, ինչպես նաև ձեռք բերելու այնպիսի հմտություններ, որոնք անրաժեշտ են մարտավարական, կրակային, մասնագիտական պատրաստության և այլ առարկաների պարապմունքների համար:

Դպրոցներում առկա խնդիրներից է շարահրապարակների ոչ բարվոք վիճակը, համապատասխան ցուցապաստառների բացակայությունը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ ՊՆ - ՀՀ ԶՈՒ Կսարգապահական կանոնադրություն, Երևան, 1996:
2. ՀՀ ՊՆ - ՀՀ ԶՈՒ Շարային կանոնադրություն, Երևան, 1996:
3. ՀՀ ՊՆ Շարային պատրաստության մեթոդիկա (ուսումնական ձեռնարկ) 2005:
4. ,ՆԶՊ և անվտանգ կենսագործունեությունե առարկայի չափորոշիչ, ծրագիր, Երևան, 2007:
5. ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտ, Շարային պատրաստությունե առարկայից մեթոդական մշակում, Երևան 2011:
6. Վ. Օհանյանի, Վ. Աստանյանի և ուրիշների ,Ռազմագիտությունե, դասագիրք 8-րդ դասարանի համար, Երևան, 2001:
7. Վ. Օհանյանի, Վ. Աստանյանի և ուրիշների ,Ռազմագիտությունե, դասագիրք 9-րդ դասարանի համար, Երևան, 2001:
8. Վ. Օհանյանի, Վ. Աստանյանի և ուրիշների ,Ռազմագիտությունե, դասագիրք 10-րդ դասարանի համար, Երևան, 2001:
9. Վ. Օհանյանի, Վ. Աստանյանի և ուրիշների ,Ռազմագիտությունե առարկայի ձեռնարկ ուսուցչի համար՝ 8-10-րդ դասարանների համար, Երևան, 2001: